

DOI: <https://doi.org/10.59630/25792644-2023.1.24-61>

**ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

**ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Կազմակերպությունների կողմից հրատարակվող ֆինանսական հաշվետվությունները ներկայումս հայեցակարգային բարեփոխումների փուլ են անցնում: Հաշվետվությունների օգտատերերը կազմակերպություններին դիտարկում են ոչ միայն մասնավոր, այլև հանրային շահերի տեսանկյունից: Այսօր արդեն սուր հարցադրումներ են կատարվում, թե արդյո՞ք հանրային տեսանկյունից հաշվետու կազմակերպությունը ի՞նչ արժեք է ստեղծում, որքանո՞վ է այն նպաստում հանրության առջև ծառայած բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ արդյունավետ կառավարման (ESG) հիմնախնդիրների լուծմանը: Այսօր արդեն միայն խոշոր հարկատու լինելը բավարար չէ հանրային տեսանկյունից արժևորելու հաշվետու կազմակերպությանը: Գործարարության մասնավոր վերջնարդյունքներից բացի (շահույթի ավելացում, շահութաբերության աճ, ֆինանսական կայունություն և այլն) ներդրողները, կազմակերպության գործընկերները կարևորվում են կայուն զարգացման առանցքային խնդիրների լուծումները:<sup>1</sup>

---

<sup>1</sup> Sté u Accounting for Sustainability: From Sustainability to Business Resilience, //IFAC, 2018

Վերջին տասնամյակում այս հարցադրումները այնքան սրվեցին, որ Հաշվապահների միջազգային խորհուրդը (IFAC) իր առջև խնդիր դրեց մշակելու կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ՝ հասցեագրված գործարարության կայուն զարգացման կարողությունների բացահայտումներին, նախագծերն արդեն շրջանառվում են (IFRS-S): Այդօրինակ ստանդարտների կիրառման պարագայում կազմակերպությունները ստիպված են լինելու ավանդական ֆինանսական հաշվետվություններին զուգահեռ ներկայացնելու կայուն զարգացմանը թիրախավորված հաշվետվություններ, որտեղ կհամակցվեն ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվական հոսքեր և կիրականացվեն «բնապահպանություն-սոցիալական-կառավարում» շրթայով (ESG) բացահայտումներ, ռիսկերի գնահատումներ, հնարավորությունների օգտագործումներ:

Սակայն, համակցված հաշվետվությունների կազմումն ու հրապարակումը դեռևս առնչվում են հաշվապահական հաշվառման մի շարք մեթոդաբանական խնդիրների հետ, ինչպիսիք են կայուն զարգացման արդյունքների ճանաչումը, չափումը, գնահատումը և համակարգված մոնիտորինգը տեղեկատվական հոսքերում: Եթե, «Ինտեգրացված հաշվետվությունների միջազգային խորհուրդը» ներկայումս կազմակերպությունների բիզնես գործունեության և կայուն զարգացման փոխկապակցման բացահայտումների խնդիր է դնում, ապա դրան զուգահեռ, թերևս չի ներկայացնում հաշվապահական հաշվառման այն մեթոդաբանությունը, որով կիրականացվեր այդ փոխկապակցման տեղեկատվական կամուրջների կառուցման ճարտարապետությունը: Հոդվածում փորձ է արվում ներկայացնել կազմակերպությունների կողմից ֆինանսական և կայուն զարգացման արդյունքների համակցված հաշվետվությունների ձևավորման տեղեկատվական ապահովման մեթոդաբանությունը հաշվապահական հաշվառման տեսանկյունից:

## ԻՆՉՈ՞Վ Է ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Գործարարության ոլորտը միշտ էլ հաշվետու է եղել իր տնտեսական ձեռքբերումներով, երբ շահառուներին, լինեն դրանք ներդրողներ, փոխատվություններ տրամադրողներ թե կառավարիչներ, տեղեկատվություն է տրամադրվել կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, ձևավորվող ֆինանսական արդյունքների վերաբերյալ: Սակայն, մեր օրերում փոխվել են կազմակերպության կողմից հրատարակվող հաշվետվությունների նպատակադրումները՝ պարզապես դուրս գալով գործարարության մասնավոր շահերի շրջանակներից և սպասարկելով ավելի լայն՝ հանրային տեղեկատվական պահանջումները:<sup>1</sup>

Այսօր կազմակերպությունները դիտարկվում են ոչ միայն մասնավոր գործարարության տեսանկյունից, որպես շահույթի ձևավորման աղբյուրներ, այլև հանրության տեսանկյունից՝ գնահատվելով որպես հավելյալ արդյունք ստեղծող կառույցներ: Եթե մոտ անցյալում կազմակերպությունները հանրության առջև հաշվետու էին հիմնականում գործարարության ֆինանսական արդյունքների գծով և հրատարակում էին ֆինանսական հաշվետվություններ, այսօր արդեն հանրությունը գործարարությանը դիտարկում է հավելյալ արդյունք ստեղծելու առումով, պահանջելով նաև ոչ ֆինանսական տեղեկատվության կազմակերպության կայուն զարգացման ուղղությամբ: Եվ եթե ավանդաբար գործարարությունը հետապնդում է նեղ տնտեսական շահեր և շրջանցում է կայուն զարգացման նպատակադրումները, ապա այն հանգեցնում է բնապահպանական լուրջ խնդիրների ձևավորմանը, սոցիալական պատասխանատվության թուլացմանը, մարդկային կապիտալի փոշիացմանը, տնտեսավարման ռեսուրսների անարդյունավետ կառավարմանը: Այս առումով ձևավորվում է տեղեկատվական պահանջ մեկնաբանելու, թե ինչ լրացուցիչ արժեքներ է ձևավորում գործարարությունը հանրության, որքանով է այն նպաստում

---

<sup>1</sup> Sté u Cho, C.H.; Kim, A.; Rodrigue, M.; Schneider, T. Towards a better understanding of sustainability accounting and management research and teaching in North America: A look at the community. *Sustain. Account. Manag. Policy J.* 2020, 11, 985–1007.

բնապահպանական, սոցիալական, կառավարչական ոլորտների կայուն զարգացմանը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

Համակցված հաշվետվությունները կորպորատիվ բացահայտումները դարձնում են թափանցիկ հաղորդակցման միջոց՝ կառավարման և ներդրումային որոշումների կայացման արդյունավետությունը բարելավելու համար: Դրանք հանդիսանում են որպես հաշվետվական մեխանիզմ՝ ընթացիկ հաշվապահական համակարգերում առկա թերությունները վերացնելու համար: Կազմակերպությունները պատրաստում են բազմաթիվ միմյանցից տարանջատված հաշվետվություններ, ինչը երբեմն հանգեցնում է ավելորդ տեղեկատվության գերբեռնվածության: Բացի այդ, ներկայումս հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգերը քննադատության են ենթարկվում իրենց հետընթաց բնույթի, կարճաժամկետ կողմնորոշման և կազմակերպչական գործունեության հիմնական շարժիչ ուժ հանդիսացող ոչ առանցքային գործոնների ընդգրկման համար: Համակցված հաշվետվությունների ներկայացման պահանջը առաջանում է կայուն զարգացման հետ կապված մտահոգությունները մեղմելու անհրաժեշտությունից: Սոցիալական և բնապահպանական խնդիրները, բնական ռեսուրսների նվազման և էկոհամակարգի դեգրադացիան պահանջում են հաշվետվության մեխանիզմների մշակում, որոնք կարող են աջակցել կայուն տնտեսավարման մոդելների անցմանը: Համակցված հաշվետվությունները նպատակ ունեն որոշում կայացնողներին տրամադրել հեռանկարային և ռազմավարական ուղղվածության տեղեկատվություն: Դրանք խրախուսում են որոշում կայացնողներին դիտարկելու կայուն գործարարության զարգացման հեռանկարային և երկարաժամկետ հեռանկարներ:<sup>1</sup>

Համակցված հաշվետվությունները անվանում են «Մեկ զեկույց», որը և՛ գործիք է, և՛ սիմվոլիկ ներկայացում, առնչվող կազմակերպչական նվիրվածությանը կայուն զարգացմանը: Այն հստակ միտում ունի շրջադարձային ներազդեցություն ունենալ կորպորատիվ գործառնությունների

---

<sup>1</sup> **St' u Busco, C.; Consolandi, C.; Eccles, R.G.; Sofra, E.** A Preliminary Analysis of SASB Reporting: Disclosure Topics, Financial Relevance, and the Financial Intensity of ESG Materiality. *J. Appl. Corp. Financ.* 2020, 32, 117–125.

նկատմամբ և փոխել ներդրողների մտածելակերպը կարճաժամկետ ուղղվածությունից դեպի երկարաժամկետ կողմնորոշում: Նաև համակցված հաշվետվությունը համարում են որպես հաղորդակցության միջոց բոլոր շահագրգիռ կողմերի համար և հնարավորություն՝ վերականգնելու վստահությունը բիզնեսի և հասարակության միջև:<sup>1</sup>

Ներկայումս կազմակերպություններում կիրառվող ֆինանսական հաշվառումը, որն ի դեպ շուրջ երկու տասնամյակ իր հաշվետվական կարգավորումներն է ստանում միջազգային ստանդարտրով, ի գորու չէ ամբողջությամբ բավարարելու գործարարության թե արտաքին, և թե ներքին շահառուների տեղեկատվական պահանջունքները, քանի որ այն հետահայաց բնույթ ունի և արձանագրում է սուսկ ռետրոսպեկտիվ արդյունքներ: Այսինքն, ֆինանսական հաշվառման համակարգը ընդհանուր առմամբ միտված է դեպի անցյալ ժամանակաշրջանի տնտեսական գործունեության դեպքերի և ֆինանսական արդյունքների արձանագրմանը և տեսանելի ապագային առնչվող նպատականիշեր չի սահմանում, որն էլ թուլացնում է ձեռնարկատերերի զգոնությունը մրցակցային պայքարում:<sup>2</sup>

Եվ ստացվում է այնպես, որ կազմակերպությունների կողմից միջազգային ստանդարտների հենքով հրապարակվող հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը ոչ միայն հետահայաց բնույթ ունի, այլև հիմնականում տնտեսական գործունեության ֆինանսական կողմն է արտացոլում: Սակայն, հաշվետվություններ օգտագործողները որոշումներ կայացնելիս կարիք ունեն նաև ոչ ֆինանսական տեղեկատվության:

Որոշումների ընդունման տեսանկյունից տվյալ տեղեկատվությունը բավարար չէ, նամանավանդ, երբ խոսքը վերաբերում է հաշվետվությունների արտաքին օգտագործողների շահերին և կազմակերպությունների գործարարության մրցունակության գնահատումներին: Որպես կանոն, հաշվապահական հաշվառման ֆինանսական ավանդական հաշվետվողականությունը նպատակաուղղվում է կազմակերպության ներքին շահե-

---

<sup>1</sup> Տե՛ս **Jorgensen, S.; Mjos, A.**; Pedersen, L.J.T. Sustainability reporting and approaches to materiality: Tensions and potential resolutions. *Sustain. Account. Manag. Policy J.* 2021, 13, 341–361.

<sup>2</sup> Տե՛ս **Ճուղուրյան Ա.**. Ֆինանսական հաշվառման տեղեկատվական ճգնաժամը, //»Հյուսիսսպիայլ» գիտական հանդես 2 (10) 2022, էջ 8:

րի բավարարմանը, ակտիվների պաշտպանությանը, արտադրական գործընթացի անխափանությանն ուղղված որոշումների կայացմանը:

Այդ իսկ պատճառով, տեղեկատվության արտաքին օգտագործողներին հասցեագրված տնտեսական գործունեության ոչ ֆինանսական արդյունքների հաշվետվողականությանը ներկայումս առանձնակի ուշադրություն չի դարձվում, այնինչ դրա անհրաժեշտությունը զգացվում է կազմակերպությունների մրցակցային դիրքերի ապահովման որոշումների կայացման ոլորտում: Արդեն իսկ, կազմակերպությունների գործունեության արտաքին շահակիցներին ներկայումս հետաքրքրում է ոչ միայն ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների շրջանակը, այլև կայուն զարգացում և մրցակցային դիրքերի ամրապնդում հուսադրող ոչ ֆինանսական հաշվետվողականությունը՝ կապված գործարարությանը առնչվող ոչ միայն նեղ տնտեսական, այլև հանրային շահերի բավարարման հետ, ինչպիսիք են բնապահպանական խնդիրները, սոցիալական ոլորտը, պետության նկատմամբ կազմակերպությունների ստանձնած հանրային պարտավորությունների կատարումը, համայնքային խնդիրների լուծումները, գործընկերների նկատմամբ դրսևորվող գործարարության վարքագիծը և այլն: Հենց այս շարժառիթներով ներկայումս խնդիր է դրվում կազմակերպելու ոչ ֆինանսական արդյունքների հաշվառում և դրանից բխող համապատասխան հաշվետվությունների ներկայացում:<sup>1</sup>

Գործող միջազգային ստանդարտներով ֆինանսական հաշվետվությունների կազմման շրջանակում կազմակերպությունների նկատմամբ առանձնակի պահանջ չի դրվում ներկայացնելու գործունեության ոչ ֆինանսական արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն, դրան զուգահեռ, տարեկան հաշվետվությունների փաթեթը կարող է ներկայացնել ոչ միայն կորպորատիվ շահերին հասցեագրված ոչ ֆինանսական ոլորտից բացատրություններ, այլև հանրային շահեր հետապնդող ոչ ֆինանսական արդյունքներ, որոնք առնչվում են կազմակերպության գործունեությանը: Դրանք հիմնականում ղեկավարության մեկնաբանություններն են, որոնք նպատակ են հետապնդում ամրապնդելու կազմակեր-

---

<sup>1</sup>Տե՛ս **Գրիգորյան Լ., Ճուղուրյան Ա.**, Կառավարչական հաշվառում, «Տնտեսագետ», Եր. 2022, 128-129:

պության բարի համբավը կազմակերպության ներքին և արտաքին շահակիցների շրջանում: Այդ իսկ պատճառով, նման ճանապարհով ներկայացվող ոչ ֆինանսական տեղեկատվությունը համակարգային բնույթ չի կրում և շատ հաճախ ներկայացվում է կազմակերպության գործունեության դրական կողմերով՝ շրջանցելով բացասական դրսևորումները:<sup>1</sup>

Այս առումով, ֆինանսական հաշվառման ներկայիս գործող համակարգը թևակոխում է ճգնաժամային փուլ, քանի որ թերևս լիովին չի բավարարում հաշվետվություններն ներքին և արտաքին օգտագործողների տեղեկատվական սպասումներին ինչպես ոչ ֆինանսական արդյունքների ձեռքբերման առումով, այնպես էլ ապագային միտված թիրախային կայուն զարգացման ուղղությունների գծով:<sup>2</sup> Իսկ այդ ճգնաժամի հաղթահարման արդյունավետ ուղի է հանդիսանում կազմակերպությունների կողմից ֆինանսական և կայուն զարգացման միասնական, համակցված հաշվետվության կազմումը և հրատարակումը, որն ի դեպ, արդեն իսկ սկսում է կարգավորվել միջազգային ստանդարտներով:<sup>3</sup>

## **ԻՆՉՊԵՍ Է ԶԵՎԱՎՈՐՎՈՒՄ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Գործարարության շարժառիթները այսօր արդեն դուրս գալով մասնավոր ոլորտից և հայտնվելով հանրային ոլորտի կիզակետում, կազմակերպություններում ձևավորում են հաշվետվությունների կազմման ինտեգրված մտածողություն: Պետք է արձանագրենք, որ համակցված հաշվետվությունները գործարարության մասնավոր և հանրային շարժառիթների և դրանց հասանելիության արդյունքների մեխանիկական ինտեգրումը չէ՝ մի կողմից ունենալով հրատարակվող ավանդական ֆինանսական ցուցանիշներ, մյուս կողմից՝ գործարարության կայուն զարգացման

---

<sup>1</sup> Տե՛ս Exploring the term “non-financial information”: an academics’ view, <https://www.emerald.com/insight/content/doi/10.1108/MEDAR-11-2019-0602/full/html>

<sup>2</sup> Տե՛ս **Tshughuryan A.**, Conceptual issues of accounting development, //Finance and accounting scientific journal, 1(9) 2022, pp. 6-15

<sup>3</sup> Տե՛ս IFRS S1 General Requirements for Disclosure of Sustainability-related Financial Information, *International Sustainability Standards Board, 2022*

ցուցիչներ: Ընդ որում, տեղեկատվական մեխանիկական համակցումը չի կարող լուծել գործարարության կայուն զարգացման ոլորտի շահառուների արդյունավետ որոշումների կայացման հիմնախնդիրը, երբ բացակայում է ինտեգրված մտածողությունը՝ հիմնված գործարարության հետևանքների համակարգված գնահատումների վրա:

Այսպես, եթե ներքին այրման շարժիչով ավտոմոբիլներ արտադրող կազմակերպությունը անցում է կատարում էլեկտրամոբիլների թողարկմանը, դրանով իսկ կանխարգելելով վտանգավոր գազերի արտանետումները և զլոբալ տաքացման ռիսկերը, ապա զուգահեռաբար բնապահպանական հավելյալ խնդիր է առաջացնում, կապված մեկ այլ կազմակերպությունում էլեկտրոնային մարտկոցների արտադրության համար պահանջվող գունավոր մետաղների հանքաքարի արդյունահանման և դրանից բխող բնապահպանական վնասակար պոչամբարների ձևավորման հետևանքների առնչությամբ: Այսինքն, կայուն զարգացման հենքով հաշվետվությունների կազմմանը ցուցաբերվում է գործարարության արժեքային շղթայի ինտեգրացված մոտեցում, բիզնես մոդելը զուտ դիտարկելով ոչ թե կազմակերպության գործունեության ներքին ոլորտում, այլև արտաքին սոցիալ-տնտեսական էֆֆեկտների շրջանակում:

Հետևաբար, ինտեգրված մտածողության հենքով կազմված հաշվետվությունները տեղեկատվություն են ներկայացնում բիզնես գործունեությանը առնչվող փոխկապակցված ռիսկերի, դրանց կանխարգելման հնարավորությունների, ինչպես նաև հետագա կառավարման հնարավորությունների մասին: Մեր օրինակում, էլեկտրամոբիլների թողարկման անցումը կազմակերպությունը չի դիտարկելու միայն սեփական բիզնես նկատառումների տեսանկյունից, այլ տալու է համապարփակ պատկեր, էլեկտրամոբիլների թողարկման ներկազմակերպչական և արտաքին էֆֆեկտների մասին: Այն է, թե ինչ բնապահպանական օգուտներ և վնասներ են ձևավորվում էլեկտրամոբիլների թողարկման արժեշղթայում, ինչպես են դրանք ազդում կազմակերպության գործարարության հավելյալ արդյունքի ձևավորման վրա, որոնք են գործարարության համընդհանուր ռիսկերի կառավարման հնարավորությունները, ինչպես օրինակ էլեկտրոնային մարտկոցների փոխարինումը ավտոմեքենաների վրա տեղադրվող

արևային մարտկոցներով և այլն: Այստեղ նաև շատ է կարևորվում կազմակերպության կարողությունների գնահատականը՝ կայուն զարգացման ապագա ընթացքի կարգավորմանն ուղղված որոշումների կայացման և իրագործմանն ուղղությամբ:

Այս առումով, հաշվետվությունների կազմման ինտեգրված մտածողությունը նպատակ ունի.<sup>1</sup>

- բարելավելու հասանելի տեղեկատվության որակը բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ոլորտներում,

- նպաստելու ավելի համախմբված հաշվետվության ձևավորմանը, հիմնված կազմակերպության բիզնես մոդելի գործունեության արժեքային շղթայի վրա,

- բացահայտելու ժամանակի ընթացքում կազմակերպության կարողությունը արժեքներ ստեղծելիս,

- աջակցելու համապարփակ մոտեցմամբ որոշումների կայացմանը և գործողություններին, որոնք ուղղված են արժեքի ստեղծմանը կարճա-ժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:

## **ԻՆՉՊԻՄԻՆ Է ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

Գործարարության ֆինանսական և կայուն զարգացման համակցված հաշվետվությունը բնորոշում է ոչ միայն կազմակերպության ընդգրկվածությունը հանրային շահ ներկայացնող բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման արդյունավետ ծրագրերին, այլև ներկայացնում է դրանց առնչվող համապարփակ հավելյալ արժեքը ձևավորման գործընթացը: Եթե ֆինանսական հաշվետվությունում հավելյալ արժեքը բնորոշվում է գործարարության արդյունքում սեփական կապիտալի աճով, ապա համակցված հաշվետվությունում այն ռեսուրսաաճման մոտեցմամբ է գնահատվում: Այս դեպքում, «Ինտեգրացված հաշվետվությունների միջազգային շրջանակում» գործարարության կայուն զարգացման ռեսուրսները ներկայացվում են 6 խմբով՝ ֆինանսա-

---

<sup>1</sup> St u International <IR> framework, January 2021, //IFRS Foundation, page 3.

կան, արտադրական, ինտելեկտուալ, մարդկային, սոցիալական, բնական, որոնք տեսանելի ապագայում աճման միտում են ունենում, կամ ընդհակառակը, անարդյունավետ գործարարության արդյունքում՝ նվազում են:<sup>1</sup>

Ֆինանսական ռեսուրսները ավանդաբար համարվելով գործարարության կազմակերպման առանցքային հենասյուն, համակցված հաշվետվություններում քննարկվում են ոչ միայն ներդրողների մասնավոր, այլ հանրային շահերի ընկալման տեսանկյունից: Եթե ներդրողները համոզվում են, որ կազմակերպության գործունեությունը չի նպաստում գործարարության կայուն զարգացմանը, առաջացնելով բնապահպանական, սոցիալական խնդիրներ, այդ դեպքում նրանք հանրային շահը վերադասում են մասնավորից և ներդրումային պասիվ դիրքորոշում են ցուցաբերում, որը գործնականում անվանում են «պատասխանատվությամբ ներդրումներ»: Եվ ընդհակառակը, երբ գործարարության նպատակադրումները թիրախավորում են նաև կայուն զարգացմանը, ապա ֆինանսական ռեսուրսների ներգրավումը ընդլայնվում է, ներառելով ոչ միայն ներդրողներին, այլև դրամաշնորհներ տրամադրողներին և փոխառություններ առաջարկողներին: Հետևաբար, համակցված հաշվետվությունը ներկայացնելիս կայուն զարգացմամբ պայմանավորված ֆինանսական կապիտալի աճը կմեկնաբանվի որպես կազմակերպության կողմից արժեքի ստեղծման արդյունք:

Արտադրական ռեսուրսների (շենքեր, սարքավորումներ, շարժակազմ, պաշարներ և այլն) աճը նույնպես համակցված հաշվետվություններում որակվում է որպես կազմակերպության կողմից արժեքի ձևավորման արդյունք, եթե գործարարությունը թիրախավորում է կայուն զարգացմանը: Այսպես, երբ արտադրողականության բարձրացման նպատակով կազմակերպությունը արդիականացնում է շահագործվող հոսքային գծերը, ապա այն հիմնականում հետապնդում է գործարարության մասնավոր շահեր, իսկ երբ ընդլայնվում է օդային ավազան արտանետումների կանխարգելման գոտիչ սարքավորումների շրջանակը, ապա այս դեպքում համակցված հաշվետվությունում այն դիտարկվում է որպես կազմակերպության կողմից հանրային արժեստեղծման արդյունք:

---

<sup>1</sup> Sté u International <IR> framework, January 2021, //IFRS Foundation, page 22.

Ինտելեկտուալ ռեսուրսների ընդլայնումն ու օգտագործումը նույնպես կազմակերպության կողմից հավելյալ արժեքի ստեղծման հնարավորություն է ստեղծում: Եթե ձեռքբերված պատենտները, ստեղծարար նախագծերը, հետազոտական մշակված ծրագրերը մի կողմից նպատակ են հետապնդում իրենց կիրառման պարագայում բարելավելու կազմակերպության մրցակցային դիրքերը, ապա մյուս կողմից, մտավոր ներուժի ընդլայնումը նպաստում է կայուն զարգացմանը ուղղված նորամուծական գործունեությանը և դրանով իսկ համակցված հաշվետվություններում բացահայտվում է որպես հավելյալ արժեքի ձևավորման գործոն:<sup>1</sup>

Կայուն զարգացման արժեքահամակարգը ներառում է նաև կազմակերպության կողմից կիրառվող մարդկային կապիտալը: Ունենալով մրցակցային կարողություններով և հմտություններով օժտված աշխատակազմ, կազմակերպությունը հաջողությունների է հասնում որակյալ արտադրանքի կամ ծառայությունների մատուցման ոլորտում և մրցակցային դիրքեր է գրավում շուկայում: Սակայն, մարդկային կապիտալի որակական կազմի շարունակական ընդլայնումը հնարավորություն է ընձեռնում կազմակերպություններին ձևավորելու կայուն զարգացմանը նպաստող ստեղծարար մոտեցում, և հետևաբար այն համակցված հաշվետվություններում մեկնաբանվում է որպես արժեստեղծման առանցքային միավոր:


Գործարարության ընթացքում կազմակերպությունները ձևավորում են սոցիալական և գործընկերային կապիտալ:<sup>2</sup> Մասնավորապես, աջակցելով աշխատակիցների սոցիալական տարբեր խնդիրների լուծմանը, ձեռք բերելով վստահելի գործընկերներ մատակարարների, գնորդների, փոխատուների շրջանում, կազմակերպությունները ամրապնդում են արտաքին և ներքին գործընկերային իրենց սոցիալական կապիտալը, որը որոշիչ դերակատարում է ունենում կայուն զարգացման ծրագրերի հաջող իրականացման գործընթացում: Նկատի ունենալով այս ամենը, համակցված հաշվետվություններում սոցիալական և գործընկերային կապիտալի

---

<sup>1</sup> Տե՛ս **Bebbington, J.; Unerman, J.** Advancing research into accounting and the UN Sustainability Development Goals. Account. Audit. Account. J. 2020, 33, 1657–1670.

<sup>2</sup> Տե՛ս **Al Mahameed, M.; Belal, A.; Gebreiter, F.; Lowe, A.** Social accounting in the context of profound political, social and economic crisis: The case of the Arab Spring. Account. Audit. Account. J. 2020, 34, 1080–1108.

շարունակական ընդլայնումը հանրության կողմից դիտարկվում է որպես կազմակերպության կողմից հավելյալ արժեքի ստեղծման արդյունք:



**Գծապատկեր 1.** Գործարարության հավելյալ արժեքի ձևավորման ընթացքը<sup>1</sup>

Ի վերջո, «Ինտեգրացված հաշվետվությունների միջազգային շրջանակը» գործարարության կայուն զարգացման առաջնային գործոն է համարում բնօգտագործումը: Երբ կազմակերպություններին հաջողվում է գործարարության ընթացքում աստիճանաբար կրճատել օգտագործվող ջուրը, նվազեցնել հումքահանքային ռեսուրսների շահագործումը, մեղմել օդային ավազանի աղտոտման ռիսկերը, ապա դրանք իրենց մեկնաբանություններն են ստանում հրապարակվող համակցված հաշվետվու-

<sup>1</sup> Կազմել են հեղինակները:

թյուններում և գնահատվում են որպես կազմակերպության կողմից ստեղծվող և հանրային շահ հետապնդող նոր արժեք:<sup>1</sup>

Այսպիսով, կայուն զարգացման արժեհամակարգը հիմնվում է այդ վեց սյուների (ֆինանսական, արտադրական, մարդկային, ինտելեկտուալ, սոցիալական, բնական) վրա, որոնք կոչվում են նաև ռեսուրսային կապիտալներ: Ընդ որում, համակցված հաշվետվությունների դիտարկումը երկարաժամկետ կտրվածքով ցույց է տալիս, թե ժամանակի ընթացքում արժեստեղծման ինչ միտումներ ունեն թվարկված ռեսուրսները, որոնք բիզնես գործընթացներում մուտքագրվում են մեկ արժեքով և այնտեղից ելքագրվում են վերափոխված արդյունքային մեկ այլ արժեքով (տես գծապատկեր 1): Եվ եթե գործարարության արդյունքում վերափոխված ռեսուրսային կապիտալը ժամանակի ընթացքում գերազանցում է ներգրավված ռեսուրսային կապիտալին (**ՎԿ > ՆԿ**), ապա կայուն զարգացման կառավարումը կազմակերպությունում համարվում է արդյունավետ, և հակառակը: Հետևաբար, համակցված հաշվետվություններում կազմակերպությունները նպատակ են հետապնդում հստակ ներկայացնելու գործարարության ընթացքում կայուն զարգացմանը խոչընդոտող ռիսկերը և դրանց մեղմանն ուղղված կառավարչական հնարավորությունները:

## **ԻՆՉՊԵՍ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ֆինանսական տեղեկատվության և կայուն զարգացման համակցմանն ուղղված միջազգային ստանդարտները ներկայացնում են այն կարևոր բացահայտումների շրջանակը, որոնք պետք է հրապարակվեն կազմակերպությունների տարեկան հաշվետվություններում: Սակայն դրան զուգահեռ չեն ներկայացվում այն մեթոդաբանական մոտեցումները, որոնք թույլ կտան քանակական առումով համադրելի դարձնելու ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները:

---

<sup>1</sup> Տե՛ս **Adams, C.A.; Larrinaga, C.** Progress: Engaging with organisations in pursuit of improved sustainability accounting and performance. Account. Audit. Account. J. 2019, 32, 2367–2394.

Եթե հրապարակվող ավանդական ֆինանսական հաշվետվություններում բոլոր ցուցանիշները ներկայացվում են դրամային տեսքով և դառնում են համադրելի (ծախս, եկամուտ, շահույթ և այլն), ապա ոչ ֆինանսական ցուցանիշները տարբեր չափիչներով են հանդես գալիս (կգ, սանտիմետր, լիտր, խորանարդ/մետր և այլն), և դրանով իսկ դժվարություններ են ստեղծում կայուն զարգացմանն ուղղված կազմակերպության գործունեությունը բխող արժեքի չափման և ֆինանսական արդյունքների հետ համադրելիության մեկ դաշտում ներկայացման համար:

Թերևս, մասնագիտական գրականությունում կայուն զարգացման նպատակով օգտագործվող ռեսուրսային կապիտալի օգտագործման արդյունքները առաջարկվում է չափել կատարողականի առանցքային ցուցանիշներով (KPI), սակայն միևնույնն է, համակցված հաշվետվություններում այդ ցուցանիշները իրենց արժեքային մեծություններով պարզապես չեն ինտեգրվում ավանդական ֆինանսական ցուցանիշների հետ, առավել ևս, հաշվառման չեն ենթարկվում:<sup>1</sup> Սակայն, մյուս կողմից համակցված հաշվետվությունները կազմվում են հաշվապահական հաշվառման շրջանակում և կարգավորվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով՝ IFRS-S (sustainability) սերիայով, որն իր հերթին ենթադրում է ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության միասնական և համակարգային հաշվառում:

Այս դեպքում հարց է առաջանում. արդյոք հաշվապահական հաշվառումը առանցքային ցուցանիշների միջոցով (KPI) ընդամենը պետք բավարարվի կայուն զարգացմանն ուղղված կապիտալի բաղադրիչների փոփոխման մշտադիտարկման հաշվետվություններով, թե պետք է ջանքեր գործադրի ոչ ֆինանսական այդ տեղակայվածությունը փոխարկելու ֆինանսականի և ինտեգրված ներկայացնելու կայուն զարգացման և գործարարության ֆինանսական արդյունքների ցուցանիշները դրամային չափիչներով: Մեր կողմից առաջարկվում է առաջ գնալ երկրորդ ճանապարհով, որը թույլ կտա կրկնակի գրանցման ենթարկել ֆինանսականի վերա-


---

<sup>1</sup> See **Demir, M.; Min, M.** Consistencies and discrepancies in corporate social responsibility reporting in the pharmaceutical industry. *Sustain. Account. Manag. Policy J.* 2019, 10, 333–364.

փոխված ոչ ֆինանսական տեղեկատվությունը և ինտեգրված մտածողությամբ համակարգային մոտեցում ցուցաբերել համակցված հաշվետվությունների վերլուծությանը: Բայց ինչպես գնահատել ոչ ֆինանսական տեղեկատվությունը դրամային չափիչներով և հաջորդիվ այն ենթարկել կրկնակի գրանցմամբ հաշվառման:

Վերոնշյալ հիմնախնդրի լուծման համար առաջարկում ենք առաջին հերթին գործարարության արժեք ստեղծող կապիտալի բաղադրիչներին տալ արժեքային չափում ներառել կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (հաշվապահական հաշվեկշռում), այն վերանվանելով “Ֆինանսական վիճակի մասին համապարփակ հաշվետվություն”: Այս դեպքում, ֆինանսական և արտադրական կապիտալից բացի, հաշվետվության առաջարկվող ձևում կներկայացվեն նաև մարդկային, սոցիալական, ինտելեկտուալ և բնական կապիտալները, իրենց ձևավորման ռեսուրսներով: Հետևաբար, հաշվապահական հաշվեկշռում կարձանագրվեն գործարարության կայուն զարգացմանն ուղղված ներգրավված ռեսուրսները, իսկ պասիվում՝ դրանցով պայմանավորված տնօրինվող կապիտալը:

Ձևավորելով կայուն զարգացման նպատակով ակտիվների և դրանց ձևավորման աղբյուրների հաշվեկշռային փոխկապվածություն (տես գծապատկեր 2), հնարավորություն կստեղծվի կրկնակի գրանցման ենթարկելու դրանց փոփոխությունները և տեղեկատվական համակարգ կառուցելու հրապարակվող համակցված հաշվետվություններում: Արդյունքում, համակցված հաշվետվությունները ներկայացնելիս կգործի ինտեգրված մտածողությունը և դրանով կբացահայտվի կազմակերպության կողմից արժեքի ստեղծման արդյունքների և դրան նպաստող ներգրավված ռեսուրսների փոփոխության պատճառահետևանքային կապերը, որն էլ իր հերթին կայուն զարգացման ռիսկերի և դրանց կառավարման հնարավորությունների մեկնաբանությունների առիթ կհանդիսանա:



**Գծապատկեր 2.** Կազմակերպության համապարփակ ֆինանսական վիճակի մասին առաջարկվող հաշվետվության կառուցվածքը<sup>1</sup>

Կիրառելով կայուն զարգացմանը հասցեագրվող ռեսուրսների և դրանցից ակնկալվող արդյունքների հաշվեկշռային կապերը, հնարավորություն կստեղծվի կրկնակի գրանցմամբ դրանք փոխկապակցելու և համակարգված ներկայացնելու: Հետևաբար, եթե գործարարության մեջ ներգրավված ռեսուրսները կնպաստեն կազմակերպության կողմից ներարժեքի ստեղծմանը, ապա կձևակերպվի հաշվապահական թղթակցություն.

***Դո Գործարարության կայուն զարգացմանն ուղղված ակտիվներ***

***Կո Կազմակերպության կայուն զարգացմանը սպասարկող կապիտալ***

Հակառակ պարագայում, վերոնշյալ հաշվապահական թղթակցությունը կհադարձվի, որը կարձանագրի կազմակերպության գործարարության պահանջը կայուն զարգացման գործընթացում:

---


<sup>1</sup> Կազմել են հեղինակները:

**ԻՆՉՊԵՍ ՀԱՇՎԱՌԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴԻՐՉՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Գիտությունը սկսում է այնտեղ,  
որտեղ սկսում են չափել:*

Դ. Մենդելեն

Կազմակերպության համապարփակ ֆինանսական վիճակի մասին առաջարկվող հաշվետվությունը կառուցելիս անհրաժեշտություն է առաջանում գործարարության տեղեկատվական համընդհանուր հոսքերից առանձնացնել տվյալների այն մասը, որն առնչվում է կայուն զարգացմանը: Տնտեսական գործունեության ընթացքում ներգրավելով տարաբնույթ ռեսուրսներ, կազմակերպությունը դրանց ոչ ամբողջական մասն է օգտագործում հանրությանը հետաքրքրող կայուն զարգացման ուղղություններով, այլ ընդհակառակը հասցեագրում է մասնավոր նկատառումներով շահույթի ստացմանը:




**Գծապատկեր 3.** Կայուն զարգացման տեղեկատվական հոսքերի տարանջատումը կազմակերպության տնտեսական գործունեության տեղեկատվության ընդհանուր պարբերաշրջանից<sup>1</sup>

<sup>1</sup> Կազմել են հեղինակները:

Ուստի, ինտեգրված տրամաբանությամբ համակցված հաշվետվություններ ձևավորելիս խնդիր է առաջանում առանձնացնելու այն տեղեկատվական հոսքերը, որոնք առնչվում են կազմակերպության կայուն զարգացմանն ուղղվող ռեսուրսների ներգրավումներին և դրանց օգտագործումից բխող արդյունքներին՝ հանրության տեսանկյունից գնահատելու համար կազմակերպության կողմից ստեղծած արժեքը (տես գծապատկեր 3):

Այս նպատակով առաջարկում ենք կիրառել հատուկ հաշիվներ, որոնք կտարանջատեն և կլիմֆավորեն կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվական հոսքերը կազմակերպության տնտեսական շահ հետապնդող գործունեության համընդհանուր տեղեկատվությունից (տես գծապատկեր 4):



- ➔ շահույթ հետապնդող գործունեության տեղեկատվական հոսքեր
- ➔ կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվական հոսքեր

**Գծապատկեր 4.** Կայուն զարգացման տեղեկատվական հոսքերի հաշվառման առաջարկվող մեխանիզմը<sup>1</sup>

<sup>1</sup> Կազմել է հեղինակը:

Այսպես, ընդունենք, որ կազմակերպությունը տարեսկզբին որոշում է կայացնում ֆինանսական տարվա ավարտին ներկայացնելու համակցված հաշվետվություն, որտեղ դրամական չափիչներով մեկտեղվելու են առևտրային գործունեությանն ու կայուն զարգացմանը առնչվող տեղեկատվություն: Այս նպատակին հասնելու համար առաջարկում ենք կատարել հետևյալ քայլերը:

**Առաջին քայլ.** ավանդական ֆինանսական իրավիճակի մասին հաշվետվության սկզբնական հոդվածները (տես աղյուսակ 1) համալրվում են գործարարության կայուն զարգացմանն ուղղված ակտիվներով, համապատասխանաբար դրանց ձևավորման աղբյուրները ներկայացնող և կայուն զարգացմանը սպասարկող կապիտալի բաղադրիչներով: Այս ճանապարհով ստացվում է կազմակերպության ֆինանսական իրավիճակի մասին համապարփակ հաշվետվություն (տես աղյուսակ 2):

**Աղյուսակ 1.** Ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվություն (մլն դրամ)

Ակտիվներ	Գումար	Կապիտալ և պարտավորություններ	Գումար
Շենքեր	20	Բաժնետիրական կապիտալ	55
Սարքավորումներ	40	Կուտակված շահույթ	5
Պաշարներ	10	Պարտավորություններ վարկերի գծով	9
Դեբիտորներ	7		
Դրամական միջոցներ	3	Պարտավորություններ գնումների գծով	11
<b>Հաշվեկշիռ</b>	<b>80</b>	<b>Հաշվեկշիռ</b>	<b>80</b>

**Աղյուսակ 2.** Ֆինանսական արդյունքերի մասին տարեսկզբյան համապարփակ հաշվետվություն (մլն դրամ)

<b>Ակտիվներ</b>	<b>Գու- մար</b>	<b>Կապիտալ և պարտավորություններ</b>	<b>Գու- մար</b>
Շենքեր	20	Ֆինանսական կապիտալ	35
Արտադրական սարքավորումներ	28	Կուտակված շահույթ	5
Օդագտիչ ֆիլտրեր	12	Բնապահպանական կապիտալ	12
Ավանդական պաշարներ	2		
Բնական հումքին փոխարինիչներ	8	Բնօգտագործման կապիտալ	8
Մտավոր սեփականության ակտիվներ	9	Ինտելեկտուալ կապիտալ	9
Աշխատանքային ռեսուրսներ	11	Մարդկային կապիտալ	11
Սոցիալական ակտիվներ	6	Սոցիալական կապիտալ	6
Դեբիտորներ	7	Պարտավորություններ վարկերի գծով	9
Դրամական միջոցներ	3	Պարտավորություններ գնումների գծով	11
<i><b>Հաշվեկշիռ</b></i>	<b>10</b>	<i><b>Հաշվեկշիռ</b></i>	<b>10</b>
	<b>6</b>		<b>6</b>

Եվ ստացվում է այնպես, որ տարեսկզբին ֆինանսական արդյունքերի մասին համապարփակ հաշվետվությունը կառուցվում է կայուն զարգացմանը միտված կապիտալի և ակտիվների վերանայումներով: Մասնավորապես, կազմակերպության տնօրինած սարքավորումները ներկայացված են երկու կտրվածքով՝ արտադրական և բնապահպանական: Նույնը առնչվում է նաև պաշարներին: Բացի այդ, Ֆինանսական արդյուն-

քների մասին համապարփակ հաշվետվությունում արձանագրվել են ակտիվներ (աշխատանքային, սոցիալական, մտավոր), որոնք ֆինանսական հաշվառման շրջանակից դուրս են, սակայն կայուն զարգացման համատեքստում ճանաչելի են կազմակերպության կողմից:

Ֆինանսական արդյունքերի մասին համապարփակ հաշվետվությունը նոր մոտեցում է ցուցաբերում նաև կազմակերպության կապիտալի կազմի առումով: Մասնավորապես, բաժնետիրական կապիտալը վերանայելով ֆինանսական և կայուն զարգացման արդյունքայինության ապահովման կտրվածքով, ինչպես նաև հավելելով ինտելեկտուալ, բնապահպանական, մարդկային, սոցիալական կապիտալի բաղադրիչներ:

**Երկրորդ քայլ.** կրկնակի գրանցամաք արձանագրվում են կազմակերպության կայուն զարգացմանը թիրախավորված ակտիվների, և դրանք ձևավորող կապիտալի բաղադրիչների փոփոխությունները: Ֆինանսական արդյունքերի մասին սկզբնական համապարփակ հաշվետվությունը հիմքեր է ստեղծում տարվա ընթացքում կազմակերպության կողմից նոր արժեքի ձևավորման հաշվառման և տարեվերջյան համակցված հաշվետվության ներկայացման համար, որը կարող ենք ներկայացնել տնտեսական հետևյալ գործառնությունների հաշվապահական արձանագրման օգնությամբ:

1. Կազմակերպության հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների համադրումով ձևակերպվել է գործարարության շահույթը, որը 15 մլն դրամով ավելացրել է դրամական միջոցները.

**Դու Դրամական միջոցներ.....15**

**Կտ Կուտակված շահույթ.....15**

2. Հաշվետու տարում ստանալով դրամաշնորհ կազմակերպությունը 8 մլն դրամով համալրել է օդամղիչ սարքավորումները.

**Դու Օդագոյիչ ֆիլտրեր.....8**

**Կտ Բնապահպանական կապիտալ.....8**

3. Կազմակերպությունում հաշվետու տարում արձանագրվել է ինտելեկտուալ ակտիվների անկում՝ 4 մլն դրամի.

**Դու Ինտելեկտուալ կապիտալ.....4**

**Կտ Մտավոր սեփականության ակտիվներ.....4**

4. Հաշվետու տարում կազմակերպությունում 2 մլն դրամով արժեզրկվել է օգտագործվող մարդկային կապիտալը.

*Դու Մարդկային կապիտալ.....2*

*Կու Աշխատանքային ռեսուրսներ.....2*

5. Պետական օժանդակությամբ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել բնական հումքին փոխարինիչներ՝ 3 մլն դրամի

*Դու Բնական հումքի փոխարինիչներ.....3*

*Կու Բնօգտագործման կապիտալ.....3*

6. Հաշվետու տարում կազմակերպությունը գործարարության վարկանիշի բարձրացման հաշվին ընդլայնել է սոցիալական կապիտալը, այն ներկայացնելով 6 մլն դրամի վերագնահատված աճով.

*Դու Սոցիալական ակտիվներ.....6*

*Կու Սոցիալական կապիտալ.....6*

Ներկայացված հաշվային թղթակցությունները արձանագրում են այն կապիտալի բաղադրիչների փոփոխությունները, որոնցով ձևավորվում է հաշվետվու ժամանակաշրջանի գործարարության արդյունքում կազմակերպության կողմից ստեղծվող հանրային արժեքը: Գործնականում այդ թղթակցությունների օգնությամբ հնարավորություն է ստեղծվում ներկայացնելու կազմակերպության կողմից հրատարակվող ֆինանսական արդյունքերի մասին համապարփակ հաշվետվություն:

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՅԱՀԱՅՏՎՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ֆինանսական արդյունքերի մասին մեր կողմից առաջարկվող համապարփակ հաշվետվության ներկայացման արդյունքում հնարավորություն է ստեղծվում տարեվերջին բացահայտելու կազմակերպության կայուն զարգացմանը առնչվող ռիսկերը, դրանց մեղմման հնարավորությունները, ինչպես նաև կառավարման կիրառվող համակարգի բարելավման ուղղությունները:

**Աղյուսակ 3.** Ֆինանսական արդյունքների մասին տարեվերջյան  
համապարփակ հաշվետվություն  
(մլն դրամ)

Ակտիվներ	Գումար		Կապիտալ և պարտավորություններ	Գումար	
	սկ	վն		սկ	վն
Շենքեր	20	20	Ֆինանսական կապիտալ	35	35
Արտադրական սարքավորումներ	28	28	Կուտակված շահույթ	5	20
Օդագտիչ ֆիլտրեր	12	20	Բնապահպանական կապիտալ	12	20
Ավանդական պաշարներ	2	2			
Բնական հումքին փոխարինիչներ	8	11	Բնօգտագործման կապիտալ	8	11
Մտավոր սեփականության ակտիվներ	9	5	Ինտելեկտուալ կապիտալ	9	5
Աշխատանքային ռեսուրսներ	11	9	Մարդկային կապիտալ	11	9
Սոցիալական ակտիվներ	6	12	Սոցիալական կապիտալ	6	12
Դեբիտորներ	7	7	Պարտավորություններ վարկերի գծով	9	9
Դրամական միջոցներ	3	18	Պարտավորություններ գնումների գծով	11	11
<b>Հաշվեկշիռ</b>	<b>106</b>	<b>112</b>	<b>Հաշվեկշիռ</b>	<b>106</b>	<b>112</b>

Այսպես, ֆինանսական արդյունքների մասին համապարփակ սկզբնական հաշվետվությունում գրանցելով տարվա ընթացքում վերոնշյալ հաշվային թղթակցությունների արդյունքները, ստացվում է տարեվերջյան հաշվետվությունը (տես աղյուսակ 3), որտեղ և համեմատական դաշտ է ստեղծվում կայուն զարգացման ռեսուրսային փոփոխությունները:

րի միջև՝ ըստ կապիտալի համապատասխան բաղադրիչների: Մասնավորապես, հրապարակված համակցված հաշվետվության օգտատերերին ներկայացվում են բացահայտումներ, թե ի՞նչ գործոնների հաշվին են նվազել մարդկային և ինտելեկտուալ կապիտալները, որո՞նք են այն հնարավորությունները, որոնց կիրառման պարագայում կազմակերպությունը միջնաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով կմեծացնի իր կարողությունները որակյալ աշխատուժի ներգրավման և մտավոր սեփականության ակտիվների ընդլայնման համար: Ընդ որում, այս պարագայում տրվում են և քանակական, և որակական գնահատումներ նաև կազմակերպության արժեքի առումով կատարելով սցենարային վերլուծություններ: Մեր օրինակում կազմակերպությունը կարող է ներկայացնել մարդկային կապիտալի և ինտելեկտուալ կապիտալի համալրման հնարավորություններ, նպատակադրվելով կատարելու սեփական ռեսուրսների ծախսեր: Այս դեպքում արդեն, կարիք կլինի կազմելու և հրատարակելու նաև ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի համապարփակ հաշվետվություններ, որոնք հնարավորություն կտան իրականացնելու սցենարային վերլուծություններ և ֆինանսական ռիսկերի գնահատումներ կարճաժամկետ ու երկարաժամկետ կտրվածքով:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Համակցված հրապարակվող հաշվետվությունները մոտ ապագայում ձևավորվելու և հրապարակվելու են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներով (IFRS-S), որտեղ հստակ ներկայացվելու են, թե ի՞նչ բացահայտումներ են արվելու կազմակերպությունների կայուն զարգացման ուղղությամբ: Բնականաբար, այս ոլորտում խնդիր է առաջանալու, թե ինչպե՞ս չափել և հաշվառել կայուն զարգացման արդյունքները և դրանց ձևավորմանը օժանդակող ռեսուրսները, որոնք հաջորդիվ հիմք են հանդիսանալու հաշվետվական հետագա բացահայտումների համար: Իհարկե, կայուն զարգացմանը առնչվող բացահայտումները կարող են հրապարակվող հաշվետվություններում կրել ընդամենը նկարագրական բնույթ, առանց համակարգված քանակական վերլուծությունների:

Սակայն կարծում ենք, որ ի վերջո հաշվապահական հաշվառման միջազգային մեթոդաբանություն պետք է ձևավորվի՝ համակցելու համար գործարարության ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ներկայացնելու կայուն զարգացման ռեսուրսների գնահատման և հաշվետվողականության միասնական մոտեցումների շրջանակ ու գործիքակազմ ոչ միայն բացահայտումների գծով, այլև ESG հայեցակարգին ուղղված վերաարժևորված այլընտրանքային տեղեկատվական համակարգման գծով: Այն իր հերթին կնպաստի ինտեգրված մտածողության հենքով կայուն զարգացման արդյունքների համակարգային վերլուծությանը և ռիսկերի մեղմմանն ուղղված արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը:

**Армен Джугурян, Геворг Мартиросян, Методологические проблемы интегрированной бизнес-отчетности** - В ближайшее время будут сформированы и опубликованы комбинированные публикуемые отчеты согласно требованиям международных стандартов бухгалтерского учета (МСФО-С), где будет наглядно представлено, какие выводы будут сделаны в направлении устойчивого развития организаций. Естественно, проблема в этой области будет заключаться в том, как измерить и учесть результаты устойчивого развития и ресурсы, обеспечивающие их формирование, которые затем станут основой для дальнейших отчетных выводов. Конечно, выводы, касающиеся устойчивого развития в опубликованных отчетах, могут носить описательный характер без систематического количественного анализа.

**Armen Tshughuryan, Gevorg Martirosyan, Methodological challenges of integrated business reporting** - In the near future, the combined published reports will be formed and published according to the requirements of international accounting standards (IFRS-S), where it will be clearly presented what findings will be made in the direction of the sustainable development of organizations. Naturally, the problem in this area will be how to measure and account for the results of sustainable development and the resources supporting their formation, which will then be the basis for further reporting findings. Of

course, findings related to sustainable development in published reports may be descriptive in nature, without systematic quantitative analysis.

Ուղարկվել է խմբագրություն 19.03.2023թ.

Գրախոսվել է 23.03.2023թ.

Մտորագրվել է տպագրության 27.03.2023թ.